Հաշվետվություն

*ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի գյուղապետարանի **2013 թ-ի հուլիսի 1-ից** մինչև **դեկտեմբերի 31-ը** կատարած աշխատանքների վերաբերյալ.*

1. Ընթացիկ կիսամյակում անցկացրել ենք ավագանու հինգ նիստ, կայացրել ենք որոշումներ և պատասխանել դիմումներին և գրություններին
2. Վճարել ենք գյուղապետարանի աշխատողների աշխատավարձը, չունենք սոց. վճարների և աշխատավարձի պարտքեր:
3. 2013թ-ի հողի հարկի հավաքագրման ցուցանիշը կազմում է 110%, իսկ գույքահարկինը 81.3%, Վարձակալական հողինը 67%, պետական դոտացիան ստացել ենք ժամանակին, իսկ սեփական եկամուտների մասով պլանը կատարել ենք101%-ով:
4. 2013թ-ի մայիսի 12-ի կարկտահարությունից համայնքի 120 հա. մշակովի հողատարածքից կարկտահարվել է 70հա: 70հա կարկտահարված տարածքից 50,64հա վնասվել է 100%-ով և պետության կողմից հողի հարկը և ջրի վարձը փոխհատոցվել է 100%-ով, իսկ 19,36հա-ը վնասվել է 70%-ով և պետությունը հողի հարկը փոխհատուցել է 50%-ով, մնացած 50հա-ը անմշակ են, կամ առվույտ է, որոնք էլ փոխհատուցման ենթակա չեն:
5. Ձեզ եմ ներկայացնում Ֆերիկ համայնքի 2013թ-ի մայիսի 12-ի կարկտահարությունից տուժած բնակիչներին, կառավարության կողմից հատկացված օգնությանը, որը բաշխվել է հավարապես:

Ա.Կարկտահարությունից հետո գյուղ նախարարության կողմից Ֆերիկ համայնքի բնակիչներին հատկացված վարունգի սերմացուն բաշխվել է բոլորին հավասարապես, աշնանը հատկացված սերմացուն բոլորն էլ ցանել են, իսկ ցուցակները փակցված են գյուղապետարանի պատին:

Բ. Կարկտահարությունից հետո գյուղ նախարարության կողմից Ֆերիկ համայնքի բնակիչներին հատկացվել է եգիպտացորենի սերմացու տանը 1կիլոգրամ, իսկ ցուցակները փակցված են գյուղապետարանի պատին:

Գ.Գյուղատնտեսական աշխատանքների արագ և արդյունավետ կազմակերպման համար Ֆերիկ համայնքի բնակիչներին հատկացվել է դիզելային վառելանյութ, առավել տուժածներին՝ 45լիտր, իսկ մյուսներին՝ 30լիտր / որոշեց ավագանին/, ցուցակները փակցված են գյուղապետարանի պատին:

Դ. Կարկտահարությունից հետո սոցապ նախարարության կողմից Ֆերիկ համայնքի առավել տուժած բնակիչներին հատկացվել է 50 հազարական դրամական օգնություն, որը բաժանել է փոստի աշխատակիցը,իսկ շահառուների ցուցակները փակցված են գյուղապետարանի պատին:

Ե. Կարկտահարությունից հետո սոցապ նախարարության կողմից Ֆերիկ համայնքի առավել տուժած 16 ընտանիք ներգրավվել են /վարձատրություն աշխատանքի դիմաց/ նմանատիպ ծրագրում, այսինքն /իրենց սեփական հողը մշակել են, բայց վարձատրվել են պետության կողմից/, ցուցակը փակցված է գյուղապետարանի պատին:

Զ. Կարկտահարությունից առավել տուժած Ֆերիկ համայնքի բնակիչներին գյուղ նախարարության կողմից հատկացվել է ազոտական սիլիտրա,/6000դրամ/ արժողությամբ ցուցակները փակցված են գյուղապետարանի պատին:

Ը. Կարկտահարությունից տուժած Արմավիրի մարզի բնակիչներին օգնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել էր հիմնադրամ և այդ հիմնադրամում հավաքված գումարից օգտվել են Ֆերիկ համայնքի առավել տուժած 30 ընտանիք, որոնց հատկացվել է 40 հազարական դրամ, ցուցակը փակցված է գյուղապետարանի պատին:

Թ.Պետության կողմից փոխհատուցվել է Ֆերիկ համայնքի բնակիչների կարկտահարված հողատարածքների ջրի վարձերը 4.700.000 դրամ, ցուցակները փակցված են գյուղապետարանի պատին:

Ժ.Պետության կողմից փոխհատուցվել է Ֆերիկ համայնքի բնակիչների կարկտահարված հողատարածքների հողի հարկերը՝ 1.460.000 դրամ: Ցուցակները փակցված են գյուղապետարանի պատին:

Ի. 19.36հա.կարկտահարված հողատարածքի 50%-ը փոխհատուցվել է պետության կողմից, իսկ մնացած 50%-ը և կարկտահարված սակայն պատահաբար չգրանցված հողատարածքի հողի հարկերը /2.36հա/ փոխհատուցել է գյուղապետարանը:

Լ. Բնակիչներից յուրաքանչյուրին տրվել ծանուցագիր, որի մեջ նշված է հողի հարկի չափը, պետության և գյուղապետարանի կողմից հատկացված փոխհատուցման չափը, իր կողմից կատարված վճարումը, ապառքը և գերավճարը:

6.Համագործակցելով «ԽՈՅ» ջրամատակարար ընկերության հետ ժամանակին մաքրվել և վերանորոգվել է ներքին ոռոգման ցանցը և համայնքի ջրոգտագործողներին ապահովել է մշտական ոռոգման ջրով:

7. Ջրմուղ կոյուղու աշխատակիցների կողմից կատարվել է համայնքի խմելու ջրի ցանցի ուսումնասիրություն: Համայնքը 2014 թվականին կներկայացվի ներդրումային ծրագրի շրջանակում հարցը լուծելու գործընթացին:

Չնայած համայնքի առջև ծառացած կարևորագույն կենսական խնդիրները կամաց-կամաց իրենց լուծումն են ստանում, սակայն դեռ կան չլուծված հարցեր, ինչպիսիք են՝ խմելու ջուրը, դպրոցը, միջհամայնքային ճանապարհը, որոնք միշտ էլ եղել են գյուղապետի և գյուղապետարանի աշխատակիցների ուշադրության կենտրոնում, որոնց էլ փորձում ենք լուծում տալ մարզպետարանի անմիջական աջակցությամբ:

Համայնքի ղեկավար / _____ / *Ն. Հայրապետյան*